ԹԵՂՈՒՏԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ
SAVE TEGHUTCIVIC INITIATIVE

ՄԱՆԻՖԵՍՏ.
ՀԱՆՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ, ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ

Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը՝

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքներով՝ հանուն մարդու առողջ եւ արժանապատիվ կյանքի, սերունդների ազատության, ընդհանուր բարեկեցության և երջանիկ կյանքի,

Ընդունելով բնության պահպանությունը որպես ոչ ինքնանպատակ գործունեություն, այլ բնապահպանական իրավունքից, հանրային անվտանգության շահերից և մարդու իրավունքների պաշտպանությունից բխող անհրաժեշտություն,

Հավատարիմ մնալով Նախաձեռնության 22 փետրվարի 2012 թվականին ընդունված Կոչում տեղ գտած համամարդկային արժեքներին և սկզբունքներին,

Հասկանալով մեր երկրում տիրող համակարգային կոռուպցիայի, տնտեսության մենաշնորհային կառուցակարգի, ընդերքի բնական պաշարների անվերահսկելի գերշահագործման և դրանցից ստացվող եկամուտների անարդարացի բաշխման և արդարադատության համակարգի բացակայության պատճառները, որոնք հանգեցնում են սոցիալական անարդարության եւ զանգվածային արտագաղթի,

Անժխտելի համարելով, որ մարդը, նրա արժանապատվությունը, նրա հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, և, որպես բնության մաս, մարդը պետք է ապրի առողջ, բարեկեցիկ եւ ներդաշնակ շրջակա միջավայրում,

Գիտակցելով, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, և, որ պետական ծառայողները պարտավոր են առաջնորդվել հանրային շահով և իրենց գործողությունների համար մինչև վերջ հաշվետու լինել հանրության առջև,

Ինչպես նաև, ***կարևորելով*** քաղաքացիական սոլիդարությունը և փոխադարձ աջակցությունը, ինքնակազմակերպված քաղաքացիական դիմադրության տարբեր ոլորտներում պայքարող մարդկանց միջև՝

Իր անվերապահ վճռականությանն է հայտնում բոլոր գործողություններում հիմնվել մեր երկրի Սահմանադրությամբ ամրագրված իրավական արժեքային համակարգի վրա, առաջնորդվել քաղաքացիական հասարակության կայացման համար անհրաժեշտ՝ մարդու իրավունքների լիարժեք պաշտպանության սկզբունքներով, չընկրկել և հետ չկանգնել Հայաստանում սահմանադրականության հաստատման, իրավունքի և իրավական օրենքի գերակայության հիմնարար սկզբունքներից:

Որպես իր գործունեության արժեհամակարգային մոտեցումներ, Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը որդեգրում է՝

1. **Բնությունը որպես** մարդու արտադրական և ստեղծագործական գործունեությանը զուգահեռ պահպանվող, դրան նպաստող և դրան չստորադասվող **արժեք**:

2. **Քաղաքացիական դիմադրության ոչ բռնի եղանակը**՝ որպես Նախաձեռնության կողմից հռչակվող բացարձակ սկզբունք և գործելաոճ: Նախաձեռնությունն առաջնորդվում է այն անքակտելի գիտակցությամբ, որ կայուն և առաջադեմ քաղաքացիական հասարակության ձևավորման համար անհերքելի նախապայման է օրինականության, հանդուրժողականության վրա հիմնված քաղաքացիական գիտակցության և մշակույթի կերտումը.

3. **Պայքարի քաղաքացիական բնույթը**՝ որպես Նախաձեռնության աշխարհայացքային դիրքորոշում: Մենք հիմնվում ենք այն սահմանադրական ելակետի վրա, որ Հայաստանում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Մենք ենք իշխանության կրողը՝ սուվերենը և որոշում կայացնողները: Չժխտելով Նախաձեռնության նպատակների իրականացման համար քաղաքական ուժերի հետ համագործակցության հնարավորությունը՝ հայտարարում ենք, որ վարչական լծակներ ձեռք բերելու համար մղվող քաղաքական-կուսակցական պայքարը դուրս է Նախաձեռնության նպատակների և խնդիրների տիրույթից.

4. **Իրավունքի գերակայության սկզբունքը**՝ որպես իրավական մեխանիզմ հակահիրավական և անարդարացի օրենքների դեմ և դրանցից բխող հետևանքների դեմ պայքարելու համար: Պետական կառավարման տարբեր ոլորտներում վարչական լծակներ ունեցող անձիք ընդունում են իրավական ակտեր, որոնք միտված են նրանց անձնական բիզնեսը ծաղկեցնելուն և հակասում են պետության և ժողովրդի ազգային շահերին, յուրացնում են հանրային ունեցվածքը: Այդօրինակ օրենքներն օրինականացնում են Հայաստանում առկա համակարգային կոռուպցիան և մարդու շահագործումը: Իրավունքի գերակայության իմաստով այսօրինակ օրենքներն անընդունելի են և չեն ճանաչվում Նախաձեռնության կողմից.

5. Ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների ձախողման պարագայում, **անմիջական**

Ժողովրդավարության սահմանադրական սկզբունքի կիրառումը քաղաքացիական իրավունքների և հանրային սեփականության պաշտպանության համար.

6. **Բնական պաշարների ողջամիտ օգտագործումը և այլընտրանքային տնտեսականճյուղերի զարգացումը՝** որպես երկրի տնտեսական զարգացման, սոցիալական արդարության և բարեկեցիկ հասարակության հիմնարար նախադրյալ: Հանրային ունեցվածքը և երկրի բնական պաշարները հանդիսանում են ժողովրդի սեփականությունը, որոնցից ստացվող եկամուտները պետք է հանրության միջև բաշխվեն արդարացիորեն:

Մենք անհերքելի ենք համարում, որ գիտակից քաղաքացիական հասարակության, ամուր և իրական ժողովրդավարության կերտումը Հայաստանի պահպանման համար կենսական անհրաժեշտություն է: Ուստի «Թեղուտի պաշտպանության» քաղաքացիական նախաձեռնությունը, համախմբում է **ազատ և գիտակից մարդկանց Հայաստանում, Սփյուռքում և ամբողջ աշխարհում**, ովքեր հավատում և պայքարում են հանուն մարդու առողջ և արժանապատիվ կյանքի:

Նախաձեռնությունը հորդորում է Հայաստանում, Արցախում, Սփյուռքում ապրող երիտասարդներին անհապաղ և անմիջականորեն ներգրավվել Հայաստանում ընթացող սոցիալական արդարության վերականգնման, բնապահպանության և արժանապատիվ կյանքի պայքարին:

Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունն առաջնորդվում է այն գիտակցությամբ, որ Մանիֆեստում արտացոլված արժեքներն ու սկզբունքները կենսագործելը մեզ համար ոչ թե պայքար է, այլ ամենօրյա ապրելակերպ: Մենք հանձնառություն ենք ստանձնում համառորեն և մինչեւ վերջ հետամուտ լինելու մեր հանրային շահերի և իրավունքների պաշտպանությանը և կոչ ենք անում մեր սկզբունքները և աշխարհայացքը կիսող բոլոր կազմակերպություններին, նախաձեռնություններին և քաղաքացիներին համերաշխություն հայտնել Մանիֆեստով հռչակվող մոտեցումներին: